ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

«8» հունվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-52/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Միկրորինգ» ՍՊԸ-ի 24.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Միկրորինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Միկրորինգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 24.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 10.11.2015թ. մասնակցել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) կողմից անցկացվող «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ընթացակարգին (այսուհետև նաև՝ Ընթացակարգ) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանչվել է 2-

րդ տեղը զբաղեցնող մասնակից: Ընկերությունը դիմել է Պատվիրատուին և ստացել 1-ին տեղը զբաղեցնող ճանաչված մասնակցի՝ «Գագաթ» ՍՊԸ–ի կողմից ընթացակարգում առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերի պատճենները: Դրանք ուսումնասիրելով՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ն նկատել է, որ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված մի քանի մոդելների նկարագրությունները չեն համապատասխանում մոդելից հետո գրված և ընթացակարգում պահանջվող տեխնիկական բնութագրերին: 24.11.2015թ «Միկրորինգ» ՍՊԸ-ն այդ մասին գրավոր կերպով հայտնել է Պատվիրատուին՝ տրամադրելով արտադրողի կայքից հղումներ, և խնդրել է մինչև անգործության ժամկետի ավարտը (26.11.2015թ.) պարզաբանել, թե ինչու տվյալ անհամապատասխանությունը չի նշվել հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության մեջ:

Մինչև անգործության ժամկետի ավարտը պատվիրատուից չստանալով պատասխան՝ «Միկրոինգ» ՍՊԸ-ն 26.11.2015թ. ժամը 16:48-ին ահազանգել է Գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

27.11.2015թ. Ընկերությունը պատվիրատուից ստացել է 25.11.2015թ. թվագրված թիվ 32-679 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ հանձնաժողովը ներկայացված ապրանքների բնութագրերը գնահատելիս՝ առաջնորդվել է մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական պարամետրերի բացվածքով, ինչն, ըստ Պատվիրատուի, համապատասխանել է հրավերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի նման պնդումներն անհիմն են, քանի որ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի առաջարկած ապրանքներից երկուսը՝ 1980Վտ հզորությամբ անխափան սնուցման սարքերը և 32000Վտ հզորությամբ անխափան սնուցման սարքերը (այն կոնֆիգուրացիաներով, որոնք ներկայացված են), չեն կարող ունենալ այն տեխնիկական բնութագրերը (բացվածքով), որոնք ներառված են եղել ինչպես ընթացակարգի տեխնիկական պահանջում, այնպես էլ մասնակցի կողմից առաջարկած մոդելների տեխնիկական բնութագրում: Մասնակիցը առաջարկել է մոդելներ և դրանց տեխնիկական բնութագրեր, որոնք միմյանց չեն համապատասխանում: Հետևաբար, նման պայմաններում գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ հանգելու այն եզրակացության, որ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված առաջարկը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: Հանձնաժողովի որոշումն անհիմն է, ոչ իրավաչափ և ոչ միայն չի բխում

ընթացակարգի պահանջներից, այլ նաև խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

01.12.2015թ. «Միկրորինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մասնակցել է Գնումների աջակցման կենտրոնում անցկացվող ահազանգի քննարկմանը, որին մասնակցել է նաև Պատվիրատուն: Պատվիրատուն առարկել է ներկայացված ահազանգի դեմ և հայտնել, որ իր կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: «Միկրորինգ» ՍՊԸ-ն խնդրել է մինչև նշված հարցի պարզաբանումը «Գագաթ» ՍՊԸ-ին հաղթող չճանաչել:

«Միկրորինգ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Գագաթ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին, ուստի «Գագաթ» ՍՊԸ-ն տվյալ ընթացակարքում հաղթող ճանաչվել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ն խնդրել է՝ չեղյալ համարել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Գագաթ» ՍՊԸ-ի միջև «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագիրը և «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ընթացակարգում հաղթող ճանաչել «Միկրորինգ» ՍՊԸ-ին:

Ի լրումն 24.12.2015թ. ներկայացված բողոքի՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ն 08.01.2016թ. թիվ 09/10-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագիրը պատվիրատուի կողմից կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, քանի որ մի քանի առանձին բնութագրեր ունեցող ապրանքներ խմբավորվել են մեկ չափաբաժնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենք 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե

դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Այս ընթացակարգի պայմաններում պատվիրատուի կողմից թույլ է տրվել նաև այլ խախտում: Ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեկ չափաբաժնում ներառելով տարբեր բնութագրեր ունեցող ապրանքատեսակներ և պահանջելով գնային առաջարկը ներկայացնել մեկ չափաբաժնում ներառված «700 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրներ (UPS) (210 հատ)», «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ», «4500 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 4 հատ», «32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ» ապրանքատեսակների համար, այլ ոչ թե առանձին ապրանքատեսակների և չափաբաժինների համար՝ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

Ելնելով վերոգրյալից՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ն խնդրել է նաև, հիմքերի առկայության դեպքում, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 30.12.2015թ. ժամը 12:00-ին ԳԲԽ-52/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Միկրորինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը և հայտնել են, որ «Գագաթ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին, ուստի «Գագաթ» ՍՊԸ-ն տվյալ ընթացակարքում հաղթող ճանաչվել չի կարող:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 30.12.2015թ. ժամը 12:00-ին ԳԲԽ-52/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացուցիչները հայտնել են, որ իրենց կողմից «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով հայտարարված ընթացակարգով մատակարարվելիք ապրանքների անվանումը սահմանվել է որպես անխափան սնուցման սարքեր՝ համապատասխան տեխնիկական բնութագրերով, և որևէ մոդելի անվանում չի նշվել: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից տրամադրվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր, ուստի իրենց կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

3. ԳԲԽ-52/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-52/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Միկրորինգ» ՍՊԸ-ն և «Գագաթ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «ՀՀՌՑ» ՓԲԸ կարիքների համար անխափան սնուցման սարքերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են 1 չափաբաժնով:

3. Ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեկ չափաբաժնում ներառված են «700 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրներ (UPS) (210 հատ)», «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ», «4500 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 4 հատ», «32000 Վտ

հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ» ապրանքատեսակները:

4. Ընթացակարգի հրավերով պահանջվել է **«1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ»,** և «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով համապատասխանաբար առաջարկվել է **«SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V»** անխափան սնուցման սարքը:

5. Ընթացակարգի հրավերով պահանջվել է **«32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ»,** և «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով համապատասխանաբար առաջարկվել է **«SUVTP40KH4B4S»** անխափան սնուցման սարքը:

4. ԳԲԽ-52/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Միկրորինգ» ՍՊԸ-ի 24.12.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), հայտնում է հետևյալը.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Մասնավորապես.

ա) Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Գտնում ենք, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեկ չափաբաժնում ներառելով տարբեր բնութագրեր ունեցող ապրանքատեսակներ և պահանջելով գնային առաջարկը ներկայացնել չափաբաժնում ներառված «700 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրներ (UPS) (210 հատ)», «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ», «4500 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 4 հատ», «32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ» ապրանքատեսակների համար, այլ ոչ թե առանձին ապրանքատեսակների համար՝ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

բ) Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

I. Ընթացակարգի հրավերով պահանջվել է **«1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ»,** և «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով համապատասխանաբար առաջարկվել է **«SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V»** ապրանքը:

«APC» ապրանքանիշի պաշտոնական ինտերնետ կայքէջի (www.apc.com) ուսումնասիրման արդյունքում Կենտրոնը հանգել է եզրակացության, որ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից առաջակվող «SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V» ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրի (UPS)» ապրանքի համար սահմանված չափանիշներին, մասնավորապես.

- Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 2 հատ» ապրանքի որպես «Ելքի» չափանիշ սահմանված է՝ «Ելքային միակցիչներ – IEC 320 C19 (Battery Backup) – ***2 հատից*** ոչ պակաս», մինչդեռ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված «SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V» ապրանքի նշված ելքային միակցիչը ***1 հատ է:***

- Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով որպես «Մարտկոցի» չափանիշ սահմանված է՝ «100% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի

տևողությունը ոչ պակաս – ***43 րոպե***», մինչդեռ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված «SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V» ապրանքի նշված չափանիշը ***42,7 րոպե է:***

- Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով որպես «Չափսերի» չափանիշ նշված է՝ «Բարձրություն ոչ ավել՝ 432մմ, լայնություն ոչ ավել՝ ***178մմ***, խորություն ոչ ավել՝ ***483մմ***», մինչդեռ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված «SMX2200RMHV2U-APC Smart-UPS X 2200VA Rack/Tower LCD 200-240V» ապրանքի նշված չափանիշներն են՝ լայնություն – ***432մմ***, խորություն – ***667մմ:***

II. Ընթացակարգի հրավերով պահանջվել է **«32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ»,** և «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով համապատասխանաբար առաջարկվել է **«SUVTP40KH4B4S»** ապրանքը:

APC» ապրանքանիշի պաշտոնական ինտերնետ կայքէջի (www.apc.com) ուսումնասիրման արդյունքում Կենտրոնը հանգել է եզրակացության, որ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից առաջակվող «SUVTP40KH4B4S» ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով 32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրի (UPS) համար սահմանված չափանիշներին:

Մասնավորապես, Հրավերով սահմանված «32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 2 հատ» ապրանքի որպես «Տիպը» չափանիշ նշված է՝ ***«Առանձին մուտքի բայպաս»***, մինչդեռ «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված «SUVTP40KH4B4S-APC Smart-UPS VT 40kVA 400V w/4 Batt. Mod., Start-Up 5X8, Internal Maint Bypass, Parallel Capability» ապրանքի ***նշված չափանիշը բացակայում է:***

Գտնում ենք, որ «Գագաթ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին, ուստի «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չէր կարող գնահատվել բավարար:

Տվյալ դեպքում «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Գագաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով և չմերժելով այն, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Պետք է նշել նաև, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Գագաթ» ՍՊԸ-ի միջև 30.11.2015թ. կնքվել է թիվ «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Գագաթ» ՍՊԸ-ի միջև 30.11.2015թ. կնքվել է թիվ «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» պայմանագիրը՝ գտնում ենք, որ Ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգն ապօրինի ճանաչելու պահանջը ենթակա է բավարարման:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ «Միկրորինգ» ՍՊԸ-ին Ընթացակարգում հաղթող ճանաչելու պահանջին՝ գտնում ենք, որ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ, ուստի այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Միկրորինգ» ՍՊԸ-ի 24.12.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. «Միկրորինգ» ՍՊԸ-ին «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգում հաղթող ճանաչելու մասին պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-52/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան